ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

05.09.2016 17:19

Լոռու մարզի հարգելի՝ փաստաբաններ,

Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հետ համատեղ **Լոռու մարզի փաստաբանների համար** կազմակերպում է վերապատրաստման դասընթաց՝ ***«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա» թեմայով***, որը տեղի կունենա **2016թ. սեպտեմբերի 12-ին (երկուշաբթի օր)**, ժամը 10:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում՝ **Best western paradise hotel Dilijan հյուրանոցային համալիրի դահլիճում** (հասցե՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան Կամոյի փող., 156 շենք):

Վերապատրաստման դասընթացը վարելու են **Մյունխենից հրավիրված փորձագետ՝ փաստաբան, դոկտոր Թոմաս Նափերթը**, ինչպես նաև **տեղացի փորձագետ՝ փաստաբան Տիգրան Սաֆարյանը**: Դասընթացին ապահովվելու է գերմաներեն-հայերեն համաժամանակյա թարգմանություն:

Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) **ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22.08.2016թ. թիվ 18/14-Ա որոշմամբ** հավատարմագրվել է որպես փաստաբանների վերապատրաստում իրականացնող կազմակերպություն:

Նշված դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում:

Դասընթացի վայր փոխադրումը փաստաբանը պետք է իրականացնի իր հաշվին (դժվարություն ունենալու դեպքում խնդրում ենք այդ մասին նախապես տեղեկացնել մարզային համակարգողին):

Դասընթացին կարող են մասնակցել ոչ ավել, քան 25 (քսանհինգ) փաստաբան: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

Բեռնել դասընթացի օրակարգը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Միջազգային իրավական համագործակցության
գերմանական հիմնադրամի (IRZ)
հայաստանյան ծրագրերի գրասենյակ

Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

13.01.20142014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

09.10.2013ԱՎԱՐՏՎԵՑ «ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

03.12.2013ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })